

## «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

## ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ Ղեկավարությանը

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՄԽ) կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի» (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնակցիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.


- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական

անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Շնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ  
տնօրեն Հայկ Մարգարյան



Առաջադրանքի պատասխանատու  
Սամվել Հովհաննիսյան, FCCA


20 ապրիլ 2026թ.  
ք. Երևան


«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Ծնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 24-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
Տոկոսային եկամուտ	5	14,510	-
Տոկոսային ծախս	5	(18,796)	-
<b>Զուտ տոկոսային ծախս</b>		<b>(4,286)</b>	-
Կոմիսիոն վճարների գծով եկամուտ		8,063	-
Կոմիսիոն վճարների գծով ծախս		(4,404)	-
<b>Զուտ կոմիսիոն վճարների գծով եկամուտ</b>		<b>3,659</b>	-
Զուտ օգուտ առևտրային գործունեությունից	6	4,093	-
Զուտ վնաս արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	7	(852)	-
Պարտքային կորուստների գծով ծախս	19	(292)	-
Ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչումից օգուտ	16	52,419	-
Ֆինանսական պարտավորության դադարեցումից վնաս	16	(30,192)	-
Այլ եկամուտներ		5,000	-
Ընդհանուր գործառնական ծախսեր	8	(188,035)	(2,789)
<b>Վնաս մինչև հարկումը</b>		<b>(158,486)</b>	<b>(2,789)</b>
Շահութահարկի գծով ծախս	9	28,560	-
<b>Տարվա վնաս</b>		<b>(129,926)</b>	<b>(2,789)</b>
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
<i>Շահույթում կամ վնասում հետագայում վերադասակարգման ենթակա հոդվածներ</i>			
-		-	-
<b>Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո</b>		<b>-</b>	<b>-</b>
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>(129,926)</b>	<b>(2,789)</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 20-ին:

  
 Գործադիր տնօրենի ժ/դ  
 Սերգեյ Գալոյան

  
 Հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ Արթուր Հարությունյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	13,867	175,000
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	11	109,416	-
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	12	42,411	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	4,770	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	14	108,981	-
Հետաձգված հարկային ակտիվներ	15	28,560	-
Այլ ակտիվներ		2,258	489
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		<b>310,263</b>	<b>175,489</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>			
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	16	44,392	-
Վարձակալության գծով պարտավորություններ	14	112,391	-
Պահուստներ		2,273	-
Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ	17	8,922	3,278
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>167,978</b>	<b>3,278</b>
<b>ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>	18		
Կանոնադրական կապիտալ		194,000	175,000
Էմիսիոն եկամուտ		81,000	-
Կուտակված վնաս		(132,715)	(2,789)
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>		<b>142,285</b>	<b>172,211</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>		<b>310,263</b>	<b>175,489</b>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Կուտակված վնաս	Ընդամենը
<b>2024թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ</b>	-	-	-	-
Տարվա վնաս	-	-	(2,789)	(2,789)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	-	(2,789)	<b>(2,789)</b>
Կանոնադրական կապիտալի համալրում	175,000	-	-	175,000
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>175,000</b>	-	<b>(2,789)</b>	<b>172,211</b>
Տարվա վնաս	-	-	(129,926)	(129,926)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	-	(129,926)	<b>(129,926)</b>
Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կապիտալի այլ աճ	19,000	81,000	-	100,000
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>194,000</b>	<b>81,000</b>	<b>(132,715)</b>	<b>142,285</b>

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 24-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Ստացված տոկոսներ	14,492	-
Վճարված տոկոսներ	(2,890)	-
Ստացված կոմիսիոն վճարներ	8,009	-
Վճարված կոմիսիոն վճարներ	(4,404)	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից մուտքեր	14,099	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում	(119,538)	-
Զուտ վնաս արտարժույթի առք ու վաճառքի գործարքներից	(634)	-
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(99,268)	-
Վճարված գործառնական ծախսեր	(55,887)	-
Այլ գործառնական մուտքեր	475	-
<b>Գործառնական գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>(245,546)</b>	<b>-</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում	(83,569)	-
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մարում	41,000	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(7,354)	-
<b>Ներդրումային գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>(49,922)</b>	<b>-</b>
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Մեփական կապիտալի համալրում	100,000	175,000
Վարկի ստացում	100,000	-
Վարկի մարում	(100,000)	-
Ստացված փոխառություններ	165,618	-
Փոխառությունների մարում	(97,493)	-
Վարձակալության գծով պարտավորության վճարումներ	(33,556)	-
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>134,570</b>	<b>175,000</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ հոսք</b>	<b>(160,899)</b>	<b>175,000</b>
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	175,000	-
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(235)	-
<b>Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</b>	<b>13,867</b>	<b>175,000</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

## 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2024 թվականին: 2024թ. դեկտեմբերի 24-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում (ՀՀ ԿԲ), որպես ներդրումային ընկերություն և ստացել է ներդրումային ծառայությունների մատուցման 0030 լիցենզիան: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Ընկերության կառավարման մարմիններն են մասնակիցների Ընդհանուր ժողովը և Ընկերության տնօրենը:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրջան փողոց, 27 շենք, տարածք 7:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 13 մարդ (2024թ.՝ 1 մարդ):

## 2. Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրը շարունակում է ձևավորվել արտաքին և տարածաշրջանային զարգացումների պայմաններում: Տարածաշրջանային անվտանգության իրավիճակը և աշխարհաքաղաքական գործոնները կարող են պահպանել որոշակի անորոշություն և ազդեցություն ունենալ տնտեսական ակտիվության, շուկաների կայունության և գործարար կապերի վրա: Մինչև ժամանակ, տարածաշրջանում իրականացվում են բանակցային գործընթացներ՝ ուղղված լարվածության նվազեցմանը և երկարաժամկետ կայունության ապահովմանը, սակայն դրանց արդյունքների և ժամկետների վերաբերյալ առկա է անորոշություն:

Ղեկավարությունը հետևում է զարգացումներին և գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ հնարավոր չէ վստահելի կերպով քանակապես գնահատել վերոնշյալ հանգամանքների ամբողջական ազդեցությունը Ընկերության գործունեության, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա՝ պայմանավորված իրադարձությունների շարունակականությամբ և գործոնների բազմազանությամբ: Տնտեսական և քաղաքական միջավայրի հետագա զարգացումները և դրանց ազդեցությունը Ընկերության վրա կարող են տարբերվել ղեկավարության ներկայիս սպասումներից: Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում վերոնշյալ հանգամանքներից բխող հնարավոր ապագա ազդեցությունների համար որևէ ճշգրտումներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պահանջվում են կիրառելի հաշվապահական ստանդարտներով:

## 3. Պատրաստման հիմունքներ

### 3.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

### 3.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Ընկերության կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

### 3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 3.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

### 3.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջներին համապատասխան կազմվելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները պարբերաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են առաջընթաց:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 19-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

Իրական արժեքի լավագույն վկայությունը տրամադրում է ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում ղեկավարությունն օգտագործում է գնահատման այլ մեթոդներ, մասնավորապես՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում համանման գործիքների հետ համեմատության մեթոդը:

#### ***Իրական արժեքի չափում***

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտվող):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված էլակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

### **3.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում**

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հնկերության կողմից:**

#### **ՖՀՄՄ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ**

ՖՀՄՄ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին:

Նաև պահանջվում է առանձին բացահայտել ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև պարտադիր այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պայմանագրային այն պայմանները, որոնց պատճառով կարող են փոփոխվել պայմանագրային հոսքերի գումարները և ժամկետները, և որոնք հանդիսանում են պայմանական դեպքեր և ուղղակի կապված չեն բազային պարտքային համաձայնագրի ռիսկի և արժեքի փոփոխության հետ:

*ՖՀՄՄ 7-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

#### **ՖՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքներ» - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի**

Համաձայն կատարված խմբագրման ՀՀՄՄ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռքբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել:

Նաև թույլատրվում է էլեկտրակայանին նման պայմանագրերը դասակարգել որպես հեջավորման գործիք, եթե հեջավորված հոդվածը ածանցյալ պայմանագրին համահունչ պայմաններով սպասվող իրացումն է:

*ՖՀՄՄ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

#### **ՖՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքներ» - Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը**

ՖՀՄՄ 9-ում կատարված խմբագրմամբ պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՄ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» հաշվապահական ստանդարտը:

*ՖՀՄՄ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

#### **ՖՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում**

ՖՀՄՄ 9-ում կատարված լրացմամբ հստակեցում է որ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:

*ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

#### **ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը»**

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 18 հաշվապահական ստանդարտը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը և փոխարինում է «ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ին:

Նշանակալի փոփոխության է ենթարկվել շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման ենթակա տեղեկատվության բովանդակությունը, որտեղ պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:

*ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

#### **ՖՀՄՍ 19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ. բացահայտումներ»**

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 19 հաշվապահական ստանդարտը, որը հնարավորություն է տալիս հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպությունների, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

ՖՀՄՍ 19-ի կիրառումը պարտադիր չէ և նշված պայմաններին բավարարող կազմակերպությունը կարող է այն կիրառել մեկ հաշվետու ժամանակաշրջանում և հրաժարվել դրա կիրառումից մեկ այլ ժամանակաշրջանում:

*ՖՀՄՍ 19-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

### **4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն**

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

#### **4.1 Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր**

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- արտարժույթի վերագնահատումից օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, այն ֆինանսական ակտիվների համար, որոնք պարտքային առումով արժեզրկված են դարձել սկզբնական ճանաչումից հետո, տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված

արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեգրված, տոկոսային եկամուտը կրկին սկսվում է հաշվարկվել համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի փոփոխությունը՝ զուտ շահույթի, թե՛ զուտ վնասի:

## **4.2 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

## **4.3 Շահութահարկ**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հողվածներին:

### ***Ընթացիկ հարկ***

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

### ***Հետաձգված հարկ***

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային գեղջերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այդ նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Հետաձգված հարկը չափվում է՝ օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունը տվյալ պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային

պարտավորությունները և ակտիվներ գուտ հիմունքով, կա՛մ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները միաժամանակ:

#### **4.4 Դրամական միջոցեր և դրանց համարժեքներ**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրանց համարժեքները իրենցից ներկայացնում են բանկերում պահվող դրամական միջոցները՝ երեք ամիս կամ պակաս ժամկետայնությամբ:

#### **4.5 Ֆինանսական գործիքներ**

##### ***Ճանաչում և սկզբնական չափում***

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր կերպով գնումները ճանաչվում են առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը հանձնառություն է ստանձնում գնել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը ֆինանսական ակտիվի կամ պարտավորության գնումն է կամ վաճառքն է համաձայն պայմանագրի, որի դրույթները պահանջում են այդ ակտիվի և պարտավորության հանձնումը՝ տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետներում:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած կամ հանած, իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

##### ***Դասակարգում և հետագա չափում***

Ընկերությունն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է՝ ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից՝ դրանք չափելով.

- ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի

կամ վնասի միջոցով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

### **Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում**

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի ներքո պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունն ու նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ստանալ պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտը, ապահովել տոկոսադրույքների որոշակի կառուցվածքը, ֆինանսական ակտիվների ժամկետները համապատասխանեցնել համապատասխան ֆինանսական պարտավորությունների ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Ընկերությունը շարունակում է ճանաչել ակտիվները:

### **Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Այդ գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- պայմանները, որոնք կարող են ճշգրտել պայմանագրային արժեկտրոնային տոկոսադրույքը, այդ թվում՝ փոփոխական տոկոսադրույքի պայմանները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեզրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր

գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում:

### **Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտն ու կորուստը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

### **Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

### ***Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում***

#### **Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են («նշանակալի վերափոխում»), սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Ընկերությունն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Ընկերությունը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործվող ուղեցույցին համանման ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հիմք ընդունելով հետևյալ որակական գործոնները.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխությունը,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխությունը,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի) ներառումը:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող վերափոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվող չեն, վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այդ դեպքում, Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է

որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ՝ շահույթում կամ վնասում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ վերափոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

### **Ֆինանսական պարտավորություններ**

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվող են: Այս դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե վերափոխումը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Ընկերությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի՝ ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Ընկերությունը ճանաչում է վերափոխման (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում վերափոխման (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ հաստատուն տոկոսադրույքների փոփոխությունները բանկերի կողմից՝ ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով բանկերն իրավունք ունեն կատարել նման փոփոխություն և Ընկերությունը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքը Ընկերությունը հաշվառում է՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Դա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ընկերությունն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբերվող են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների վերափոխումը հաշվառվում է որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորուստի մաս: Եթե փոխանակումը կամ վերափոխումը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

## *Ապաճանաչում*

### **Ֆինանսական ակտիվներ**

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կա՛մ բոլոր, կա՛մ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

### **Ֆինանսական պարտավորություններ**

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Ընկերությունը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

## *Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն միայն այն դեպքում, երբ Ընկերությունը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ մարել ֆինանսական ակտիվները և պարտավորությունները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

## **4.6 Արժեզրկում**

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար

- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով, որոնք հանդիսանում են պարտքային գործիքներ,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվների գծով:

Կորստի պահուստը չափվում է՝

- 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով՝ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մասը, որն առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (1-ին փուլ), կամ
- ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով՝ ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում (2-րդ փուլ և 3-րդ փուլ):

Ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափվում ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր: Մյուս բոլոր գործիքների համար որոնց համար կորստի պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Դրանք չափվում են որպես պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից տարբեր ապագա տնտեսական սցենարների կշռումից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերության ներկա արժեք՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

#### 4.7 Հիմնական միջոցներ

Ընկերության հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում առաջընթաց:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Գույք և գրասենյակային սարքավորումներ	5 տարի
Համակարգչային և այլ տեխնիկա	1-5 տարի

#### 4.8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Լիցենզիաներ և վստահագրեր

Իրավաբանորեն ամրագրված  
իրավունքի ժամկետում

#### 4.9 Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործառնությունն այնպիսի գործառնություն է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով կատարում (կարգավորում):

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

- ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.
- բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով. և
- գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Դրամային հոդվածները առկա դրամական միջոցներն են, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվները և պարտավորությունները: Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները հաշվառելու նպատակով դրամային հոդվածներ են համարվում նաև արտարժույթով տրված և ստացված կանխավճարները:

Ոչ դրամային հոդվածները հաշվեկշռի բոլոր հոդվածներն են, բացառությամբ առկա դրամական միջոցների, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվների և պարտավորությունների: Որպես փոխանակման փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվարկային փոխարժեքը:

<i>Արտարժույթ</i>	<i>31.12.2025թ</i>	<i>31.12.2024թ</i>
1 ԱՄՆ դոլար	381 .36 դրամ	396.56 դրամ
1 ՌԴ ռուբլի	4 .87 դրամ	3 .71 դրամ

#### 4.10 Սեփական կապիտալ

##### *Բաժնեմասեր*

Բաժնեմասերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ:

##### *Չբաշխված շահույթ*

Ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

##### *Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու լնկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ***Էմիսիոն եկամուտ***

Բաժնեմասերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև տարբերությունից ստացված միջոցներ:

### **4.11 Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղջման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պատավորությանը հատուկ ռիսկերը: Չեղջի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

**5. Զուտ տոկոսային ծախս**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 24-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
<b>Տոկոսային եկամուտ</b>	<b>14 510</b>	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	9,776	-
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից	3,591	-
Բանկային հաշիվներից	1,143	-
<b>Տոկոսային ծախս</b>	<b>(18,796)</b>	-
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններից	(384)	-
Ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորություններից	(6,054)	-
Ֆինանսական վարձակալությունից	(12,358)	-
<b>Զուտ տոկոսային ծախս</b>	<b>(4,286)</b>	-

**6. Զուտ օգուտ առևտրային գործունեությունից**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 24-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
<b>Օգուտ առևտրային գործունեությունից</b>	<b>30,747</b>	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից օգուտ	14,098	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերաչափումից օգուտ	16,649	-
<b>Վնաս առևտրային գործունեությունից</b>	<b>(26,654)</b>	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքի ինքնարժեք	(14,137)	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերաչափումից վնաս	(12,517)	-
<b>Զուտ վնաս առևտրային գործունեությունից</b>	<b>4,093</b>	-

**7. Զուտ վնաս արտարժույթի փոխարժեքային տարբերությունից**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 24-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
<b>Օգուտ արտարժույթի փոխարժեքային տարբերությունից</b>	<b>10,648</b>	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ	10,648	-
<b>Վնաս արտարժույթի փոխարժեքային տարբերությունից</b>	<b>(11,500)</b>	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս	(11,500)	-
<b>Զուտ վնաս արտարժույթի փոխարժեքային տարբերությունից</b>	<b>(852)</b>	-

### 8. Ընդհանուր գործառնական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 24-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	(116,556)	-
Մաշվածություն և ամորտիզացիա	(27,036)	-
Գրասենյակային, կոմունալ և կապի գծով ծախսեր	(1,989)	-
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	(31,974)	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(1,351)	-
Գույքի սպասարկման և պահպանման ծախսեր	(2,821)	-
Անդամավճարներ	(4,236)	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	(2,778)
Զվոճի հատուցվող հարկեր և տուրքեր	(729)	-
Այլ գործառնական ծախսեր	(1,343)	(11)
<b>Ընդամենը</b>	<b>(188,035)</b>	<b>(2,789)</b>

### 9. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 24-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
Ընթացիկ հարկեր	-	-
Հետաձգված հարկեր	28,560	-
<b>Ընդամենը</b>	<b>28,560</b>	<b>-</b>

### 10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,867	175,000
<b>Ընդամենը</b>	<b>13,867</b>	<b>175,000</b>

### 11. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	Արժեկտրոնի %	Ժամկետայնություն	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ընկերության կողմից պահվող</b>				
Կորպորատիվ պարտատոմսեր ֆիքսված մարման ժամկետով	10.25%	2026	41,034	-
ՀՀ պետական պարտատոմսեր	8.4-9%	2027-2035	68,382	-
<b>Ընդամենը Ընկերության կողմից պահվող</b>			<b>109,416</b>	<b>-</b>
<b>Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ</b>				
			<b>109,416</b>	<b>-</b>

Իրական արժեքի չափումները ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:

## 12. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	Արժեկտրոնի %	Ժամկետայ նություն	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ընկերության կողմից պահվող</b>				
Կորպորատիվ պարտատոմսեր ֆիքսված մարման ժամկետով	9.5-10.25%	2025-2028	26,415	-
ՀՀ պետական պարտատոմսեր	8.60%	2029	15,996	-
<b>Ընդամենը Ընկերության կողմից պահվող</b>			<b>42,411</b>	<b>-</b>
<b>Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</b>			<b>42,411</b>	<b>-</b>

ԱՊԿ պահուստը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում:

## 13. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Համակարգչային և այլ տեխնիկա	Լիցենզիաներ և վստահագրեր	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>				
<b>2024թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ</b>	-	-	-	-
Ավելացում	-	-	-	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	-	-	-
Ավելացում	840	4,850	260	5,950
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>840</b>	<b>4,850</b>	<b>260</b>	<b>5,950</b>
<b>Մաշվածություն և ամորտիզացիա</b>				
<b>2024թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ</b>	-	-	-	-
Տարվա ծախս	-	-	-	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	-	-	-
Տարվա ծախս	141	874	165	1,180
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>141</b>	<b>874</b>	<b>165</b>	<b>1,180</b>
<b>Հաշվեկշռային արժեք</b>				
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	-	-	-
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>699</b>	<b>3,976</b>	<b>95</b>	<b>4,770</b>

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները գրավադրված չեն և դրանց նկատմամբ այլ սահմանափակումներ առկա չեն:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը վաճառքի համար պահվող, ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ չունի:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունը ամբողջությամբ մաշված հիմնական միջոցներ չունի:

#### 14. Ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալություն

Հաշվետու տարվա վերջի դրությամբ Ընկերությունն ունի թվով 1 երկարաժամկետ վարձակալություն, որն իրենից ներկայացնում են Ընկերության գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարածք: Վարձակալության առարկայի նկատմամբ օգտագործման իրավունքը ընկերությանը փոխանցվել է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 1-ը: Պայմանագրով նախատեսված վարձակալած տարածքի ամսական վարձավճարը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում է 3,000,000 ՀՀ դրամ:

Ընկերությունն ակտիվի օգտագործման իրավունքի չափման համար կիրառում է ՖՀՄՍ 16-ով նախատեսված ինքնարժեքի մոդելը:

Ընկերությունն ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության համար կիրառում է գծային մեթոդ:

Հաշվետու տարվա վերջում Ընկերությունը չունի վարձակալած փոքրարժեք ակտիվներ և կարճաժամկետ վարձակալության պայմանագրեր: Հաշվետու և նախորդ տարում Ընկերությունը չի ունեցել վարձակալության փոփոխուն վճարումներին վերաբերող ծախս՝ որը չի ներառվում վարձակալության գծով պարտավորությունների չափման մեջ:

Հաշվետու և նախորդ տարում Ընկերությունը չի ունեցել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ենթավարձակալությունից ստացվող եկամուտ:

Հաշվետու և նախորդ տարում Ընկերությունը չի ունեցել վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքներից առաջացող օգուտներ կամ կորուստներ:

Պայմանագրային չզեղչված դրամական հոսքերը ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:

#### Ակտիվի օգտագործման իրավունք

<i>Սկզբնական արժեք</i>	Հազար դրամ
<b>2024թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ</b>	-
Ավելացումներ	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-
Ավելացումներ	126,291
Վերաչափում	8,547
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>134,838</b>
<i>Գուտակված մաշվածություն</i>	
<b>2024թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ</b>	-
Տարվա ծախս	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-
Տարվա ծախս	25,857
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>25,857</b>
<i>Հաշվեկշռային արժեք</i>	
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>108,981</b>

#### Վարձակալության գծով պարտավորություն

	Հազար դրամ
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-
Ավելացում	125,041
Վերաչափում	8,547
Ֆինանսական ծախսեր	12,359
Վարձավճարներ	(33,556)
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>112,391</b>

**15. Հետաձգված հարկային ակտիվներ**

Ընկերությունը ենթակա է որոշակի մշտական հարկային տարբերությունների, որոնք պայմանավորված են որոշակի ծախսերի՝ հարկային տեսանկյունից չնվազեցվող լինելու, ինչպես նաև որոշակի եկամուտների՝ հարկային տեսանկյունից չհարկվող համարվելու հետ:

Հետաձգված հարկերն իրենցից ներկայացնում են ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակով օգտագործված՝ ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև ժամանակավոր տարբերությունների գուտ հարկային հետևանքները: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերություններն առավելապես իրենցից ներկայացնում են եկամուտների և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդներ/ժամկետներ, ինչպես նաև՝ հարկային հաշվառման մեջ որոշակի ակտիվների համար հարկվող բազայի գոյացման ժամանակավոր տարբերություններ: Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18%:

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Տարեսկզբի մնացորդ</b>	-	-
Շահույթում կամ վնասում ճանաչված	<b>28,560</b>	-
<b>Տարեվերջի մնացորդ</b>	<b>28,560</b>	-

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2025թ. հունվարի 1-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Վարձակալության գծով պարտավորություններ	20,231	20,231	-
Պահուստներ չօգտագործված արձակուրդի գծով	409	409	-
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ԱՊԿ	53	53	-
Հարկային վնաս	32,104	32,104	-
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ</b>	<b>52,797</b>	<b>52,797</b>	-
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(19,616)	(19,619)	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	(727)	(727)	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(365)	(365)	-
Փոխառություններ	(3,526)	(3,526)	-
Այլ ակտիվներ	(3)	(3)	-
<b>Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ</b>	<b>(24,237)</b>	<b>(24,237)</b>	-
<b>Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ</b>	<b>28,560</b>	<b>28,560</b>	-

**16. Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ**

Հազար դրամ	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Չապահովված փոխառություններ այլ կողմերից</i>				
Փոխառություններ	44,392	-	44,392	-
<b>Ընդամենը</b>	<b>44,392</b>	<b>-</b>	<b>44,392</b>	<b>-</b>

Գրավով չապահովված փոխառությունները 5% ֆիքսված տոկոսադրույքով փոխառություններ են ՀՀ դրամով, ՌԴ ռուբլիով, որոնք ստացվել են երրորդ կողմից և դրանց մարման ժամկետն է 2030 թվականը: Այս փոխառությունները զեղչվել են այն դրույքներով (12.5-13.3%), որոնցով Ընկերությունը կկարողանար գումար փոխառել տեղական բանկերից և վարկային կազմակերպություններից նույն նպատակով համապատասխան արժույթներով և ճանաչվել են ամորտիզացված արժեքով՝ համաձայն ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ստանդարտի պահանջների, ընդ որում զեղչի ամորտիզացիան ճանաչվել է ֆինանսական ծախսերում՝ փոխառության ակնկալվող ժամկետի ընթացքում:

Փոխառության անվանական արժեքի և սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դրա իրական արժեքի տարբերությունը ճանաչվել է շահույթում կամ վնասում որպես ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչումից օգուտ:

2025 թվականի դեկտեմբերին փոխառության մի մասը (102,493 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով) մարվել է պայմանագրային ժամկետից շուտ: Վաղաժամ մարման պահին Ընկերությունը դադարեցրել է ֆինանսական պարտավորության ճանաչումը և շահույթում կամ վնասում ճանաչել է ֆինանսական պարտավորության դադարեցումից վնաս, որը ներկայացնում է մարման ամսաթվի դրությամբ պարտավորության հաշվեկշռային արժեքի և պարտավորության մարման համար վճարված գումարի տարբերությունը:

Ստորև ներկայացվում են դեռևս չմարված փոխառությունների պայմանները ըստ մնացորդային պայմանագրային մարման ժամկետների: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարները պայմանագրային չզեղչված դրամական հոսքերն են՝ սկզբնական ճանաչման արժեքով: Նման չզեղչված դրամական հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված գումարներից, քանի որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված փոխառությունները չափվել են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հազար դրամ		Անվանական %	Ժամկետայ նություն	2025թ.	2024թ.
Արժույթ	դեկտեմբերի 31-ի դրությամբ			դեկտեմբերի 31-ի դրությամբ	
<i>Այլ կողմերից</i>					
Փոխառություններ	ՀՀ դրամ	5%	2030	37,925	-
Փոխառություններ	ՌԴ ռուբլի	5%	2030	25,086	-
<b>Ընդամենը</b>				<b>63,011</b>	<b>-</b>

## 17. Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,062	-
Պարտավորություններ աշխատակիցների հատուցումների գծով	1,659	-
Պարտավորություններ պետական բյուջեի գծով	2,407	-
Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	-	2,778
Այլ պարտավորություններ	794	500
<b>Ընդամենը</b>	<b>8,922</b>	<b>3,278</b>

## 18. Մեփական կապիտալ

### Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 2025թ. վերջի դրությամբ կազմում է 194,000 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 1,940 բաժնեմասի, բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 100,000 ՀՀ դրամ (2024՝ 100,000 ՀՀ դրամ):

Ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված և լրիվ վճարված են:

Հաշվետու տարում կատարվել է կապիտալի ավելացում՝ երրորդ անձի կողմից ավանդի ներդրման միջոցով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալը համալրվել է 19,000 հազ. ՀՀ դրամով, իսկ 81,000 հազ. ՀՀ դրամ գումարը ուղղվել է Ընկերության Էմիսիոն եկամուտ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ներդրումային ընկերության ընդհանուր կապիտալում մասնակիցների նշանակալից մասնակցության վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև.

Նշանակալից մասնակցի անունը, ազգանունը	Բաժնեմաս (ՀՀ դրամ)	Բաժնեմասի չափը %
Տիգրան Դավթյան	175,000	90.21%

## 19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

### (ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Այս ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն տարբեր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը որոշելու Ընկերության մեթոդների մասին:

#### **Ընկերության՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը**

Ընկերության որոշ ֆինանսական ակտիվներ չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Ընկերությունը տրամադրում է իր ակտիվների և պարտավորությունների վերլուծություն, որոնք սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով, խմբավորվում են մակարդակներ 1-ից 3-ում՝ հիմք ընդունելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանը: Մակարդակները ներկայացվում են ստորև՝

- Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):

- Մակարդակ 2 - մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող) դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով, և
- Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Ընկերության ֆինանսական ակտիվների իրական արժեքի որոշման սկզբունքները (մասնավորապես՝ գնահատման մեթոդը(ները) և օգտագործված ելակետային տվյալները):

Ֆինանսական ակտիվներ	Իրական արժեք		Իրական արժեքի հիերարխիա
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Հազար դրամ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	<b>109,416</b>	-	2-րդ մակարդակ

***Գնահատման մեթոդ(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)***

ՀՀ-ում թողարկված կորպորատիվ պարտատուները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում, քանի որ դրանք չափվում են ոչ ակտիվ շուկայում գնանշվող գներով:

ՀՀ պետական արժեթղթերը դասակարգվել են մակարդակ 2-ում, քանի որ դրանք գնահատվել են՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդներ, այն դրույքաչափով, որը արտացոլում է շուկայի եկամտաբերությունը որոշակի ժամականահատվածում մինչև մարման ժամկետը:

***Ընկերության՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը (որոնց համար, սակայն, պահանջվում են իրական արժեքի բացահայտումներ)***

Հաշվի առնելով շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթը՝ ղեկավարությունը գտնում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին: Կիրառելի լինելու դեպքում, համապատասխան ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում է լրացուցիչ տեղեկատվություն իրական արժեքի որոշման հիմքում ընկած ենթադրությունների վերաբերյալ, սակայն, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտարկվի որպես իրացվելի՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման պահին:

**(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում**

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Ընկերության ռիսկի կառավարման ընդհանուր ծրագիրը հաշվի է առնում Հայաստանի ֆինանսական շուկայի անկանխատեսելիությունը և ոչ արդյունավետությունը և ձգտում է նվազեցնել բացասական ազդեցությունն Ընկերության ֆինանսական արդյունքների վրա: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարումը, և ֆինանսական ռիսկային գործունեությունը կառավարվում է համապատասխան քաղաքականությունների և ընթացակարգերի միջոցով՝ նպատակ ունենալով ապահովել ֆինանսական ռիսկերի հայտնաբերումը, չափումը և կառավարումը՝ համաձայն Ընկերության քաղաքականության:

Ընկերությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերին: Այդ ռիսկերից յուրաքանչյուրի կառավարման քաղաքականությունն ամփոփված է ստորև:

**(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ**

Ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

**(ii) Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում դրամական միջոցների և դրանց համարժեքների, կորպորատիվ պարտատոմսերի և ՀՀ պետական պարտատոմսերի հետ կապված:

Ֆինանսական ակտիվների և պայմանագրի գծով ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Ստորև ներկայացված է ակտիվների գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ</i>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,867	175,000
ՀՀ պետական պարտատոմսեր	15,996	-
Կորպորատիվ պարտատոմսեր	26,415	-
<i>Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Կորպորատիվ պարտատոմսեր	41,034	-
ՀՀ պետական պարտատոմսեր	68,382	-
Այլ ակտիվներ	2,258	-
<b>Ընդամենը</b>	<b>167,952</b>	<b>175,000</b>

**Պարտքային որակը ըստ ֆինանսական ակտիվների դասի**

Ֆինանսական ակտիվների պարտքային որակը կառավարվում է Ընկերության կողմից՝ հիմք ընդունելով արտաքին վարկանշային համակարգ: Չվարկանշված ռիսկերը դասակարգվում են «Ստանդարտ դաս»-ում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք արժեզրկված են:

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվել են «Ստանդարտ դաս»-ում և ներառվել են փուլ 1-ում ԱՊԿ հաշվարկի նպատակներով:

Ստորև աղյուսակը ներակայացնում է Ընկերության կոնտրազենտների գնահատման համակարգի և արտաքին վարկանշման մանրամասները 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Moody's ՄՎԳ վարկանիշ	Ներքին վարկանշման նկարագրություն	ԴՀ
Aaa-ից A3	Բարձր դաս	0.00%
Baa1-ից B3	Ստանդարտ դաս	0.18 - 2.6%
Caa1-ից C	Ստանդարտից ցածր դաս	14.43%
D և ավելի ցածր վարկանիշ	Արժեզրկված	100.00%

Ֆինանսական ակտիվների նկատմամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	Ընդամենը
<b>2024թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ</b>	-	-
Կորուստների գծով պահուստի զուտ ծախս	-	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	-
Կորուստների գծով պահուստի զուտ ծախս	(292)	(292)
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(292)</b>	<b>(292)</b>

**(iii) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգելու:

**Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին**

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների մինչև մարումը մնացած պայմանագրային ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները:

31 դեկտեմբերի 2025թ. Հազար դրամ	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարուց ավել	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	-	-	78,798	78,798	44,392
Վարձակալության գծով պարտավորություններ	36,000	72,000	33,000	141,000	112,391
Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ	8,922	-	-	8,922	8,922
<b>Ընդամենը</b>	<b>8,922</b>	<b>-</b>	<b>111,798</b>	<b>228,720</b>	<b>165,705</b>

31 դեկտեմբերի 2024թ. Հազար դրամ	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարուց ավել	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ	3,278	-	-	3,278	3,278
<b>Ընդամենը</b>	<b>3,278</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>3,278</b>	<b>3,278</b>

**(iv) Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն Ընկերության եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների,

փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացում:

**Արժույթային ռիսկ**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ՌԴ ռուբլի	ԱՄՆ դոլար	Հազար ՀՀ դրամ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	390,169	1,017	2,289
Այլ ակտիվներ	385,000	32	1,686
	<b>775,169</b>	<b>1,049</b>	<b>3,975</b>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Փոխառություններ	26,137,750	-	18,225
Այլ պարտավորություններ	-	1,252	478
	<b>26,137,750</b>	<b>1,252</b>	<b>18,703</b>
<b>Զուտ արդյունք</b>	<b>(25,362,581)</b>	<b>(203)</b>	<b>(14,728)</b>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին:

10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%): Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու ազդեցություն	
	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	(1,473)	-

**Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

**20. Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը գործունեություն անընդհատության հիմունքով շարունակելու իր կարողությունն ապահովելու համար՝ միաժամանակ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել շահառուների եկամուտները: Ընկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալը, որը բաղկացած է կանոնադրական կապիտալից, էմիսիոն եկամտից և կուտակված վնասից, որոնք բացահայտված են սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

ՀՀ Կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների՝ Ընկերությունը պետք է ապահովի

50,000 հազար ՀՀ դրամ նվազագույն կանոնադրական կապիտալ: 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը համապատասխանում է կապիտալի նվազագույն պահանջներին:

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները ստուգվող հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	142,285	172,211
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(13,867)	(175,000)
<b>Կապիտալ</b>	<b>128,418</b>	<b>(2,789)</b>
Ընդհանուր սեփական կապիտալ	142,285	172,211
Պարտավորություններ այլ անձանց նկատմամբ	44,392	-
<b>Ընդհանուր ֆինանսավորում</b>	<b>186,677</b>	<b>172,211</b>
<b>Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն</b>	<b>0.69</b>	<b>(0.02)</b>

## 21. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ Ընկերության նշանակալից մասնակիցը, գործադիր տնօրենը, նրանց հետ կապակցված անձինք և համատեղ վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունները:

### Հսկողություն

Ընկերության նշանակալից մասնակից է համարվում Տիգրան Դավթյանը, ով հանդիանում է վերջնական հսկող:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ:

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների և չմարված մնացորդների մանրամասները հետևյալն են.

#### ա) Վերջնական հսկողի հետ կատարված գործարքներ

Հազար ՀՀ դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Վճարման ենթակա մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	28,473	-	1,659	-
Առհաշիվ գումարներ	658	500	-	500

## 22. Պայմանականություններ

### 22.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է

համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

## **22.2 Ապահովագրություն**

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## **22.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ**

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## **22.4 Դատական գործեր**

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

## **22.5 Պայմանական պարտավորություններ**

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

## **23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր**

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

Հաշվետու ամսաթվից հետո՝ 2026թ. փետրվարի 28-ից, սկսվել է ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմական գործողություններով պայմանավորված զինված հակամարտություն Իրանի դեմ, որն ուղեկցվում է տարածաշրջանային լարվածության էական աճով: Հայաստանի Հանրապետությունը սահմանակից է Իրանին, ուստի ստեղծված իրավիճակը կարող է բացասաբար ազդել տնտեսական միջավայրի և շուկաների վրա՝ պայմանավորելով անկայունություն, սահմանափակումներ և խափանումներ միջազգային փոխադրումների, մատակարարումների, գնագոյացման և ֆինանսական շուկաների ոլորտներում: Ղեկավարությունը գնահատում է, որ տվյալ իրադարձությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմված ֆինանսական հաշվետվությունների համար հանդիսանում է չճշգրտող դեպք, իսկ հնարավոր ազդեցության չափը հաշվետվությունների թողարկման պահին վստահելի կերպով քանակապես գնահատել հնարավոր չէ՝ իրադարձությունների շարունակականության և բարձր անորոշության պատճառով: